Դանիել Վարուժան

Առաջին ծիլեր

Ջեղուն ավշին հողերուն տակ պայթեցուց
Սերմերն: Արտերս այս գիշեր
Կանանչցեր են լուսնկային տակ գարնան…
– Մայրի՛կ, ինծի ծիլ մը բեր,
Քըրտինքիս ցողը վըրան:

Կատաղորե՛ն, կատաղորե՛ն հորդեր են
Տե՛ս, ցորեններն աղածրի:
Դաշտերն հագեր են զմրուխտե պատմուճան…
– Քույրի՛կ, ծիլ մը բեր ինծի,
Եզիս շողիքը վըրան:

Կը փողփողին արտավարե արտավար
Կարծես կանանչ մոմիկներ:
Ամեն ընձյուղ մարգրիտ մ'ունի իր բերանն…
– Հոտա՛ղ, ինծի ծիլ մը բեր,
Արևուն շողը վըրան:

Կը զարդարե ամայությունը հողին
Մատղաշ ծաղի՛կը հացի.
Կանանչին մեջ կոշտերը թուխ կը լողան…
– Հարսնո՛ւկ, ծիլ մը բեր ինծի,
Մատերուդ բույրը վըրան:

Յատուկ Պոէմ

Ծիլ արտերուս մեջն է ծըլեր նըշենիս,
Հոն միսմինա՛կը ծաղկեր…
– Մայրի՛կ, քույրի՛կ, հոտա՛ղ, հարսնո՛ւկ սիրական,
Բերեք անկե ծաղիկներ,
Բերեք վարդգույն ծաղիկներ,
Հընձվորին հո՛ւյսը վըրան: